



Շնորհավոր Նոր տարի եւ Սուրբ ծնունդ



ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
2003
ԿՆԿՆԵՐԵՐԻ ԿՆԵՆ

ՀԱՍՏԵ՛ ք.ՎԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
Հեռ.ՆԱԽՈՒՆ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
ՀԻՆԱԿՈՒՐ ԵՎ ՀԻՐԱՏԱՐԱՎԿԻՉ «ՍՅՈՒՆԻԱՍ ԱՇԽԱՏԱՐ»
ՍԱՐԱՆԱԹԱԿ ՊԱՏԱՆԱԿԱՑՎՈՒԹՅԱՐ ԵՎ ԿՐԻՈՒԹՅՈՒՆ

Այունյաց երկիր

Գրկը 100 դրամ:

ԶՈՐԵՆԿԱԲԹԻ
28 ԴԵՍԵՄԲԵՐԻ 2011 • № 22 (241)

www.syuniacyerkir.am

Արդ, ամենից առաջ աղաչում եմ աղոթք անել... որպեսզի խաղաղությամբ եւ հանդարտությամբ վարենք մեր կեանքը...
ՊՈՐՈՍ ԱՍԱԶՅԱԼ



Նախաամանորյա երազ. Գյուլսեր Դիլարսկու հանդիպումը Քաջարան գյուղի բնակիչների հետ:

Հերոսապատում

Սյունիքն Արցախյան ազատամարտում

ՆՈՐ ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿ

«Սյունյաց երկիրը» սկսում է թերթի մի նոր՝ աննախադեպ համարի նախապատրաստության աշխատանքներ, համար, որ կարդացողի Արցախյան ազատամարտին Սյունիքի մարզի եւ սյունեցիների մասնակցությունը: Համարը կիրառարակվի 2014-ի տարեկազմին: Նախապատրաստական աշխատանքներին այդքան ժամանակ տրամադրելն ինքնանպատակ չէ: Թեման տարողունակ է եւ պատասխանատու, հանգամանակից ուսումնասիրություն պահանջող:

«Սյունյաց երկիր» այդ համարը, որ կունենա 200 էջ (A3 ծավալով, մի մասը կավճապատ թղթի վրա եւ գունավոր տպագրությամբ), նպատակ ունի առաջին անգամ համակարգված, ամբողջական, հավաստի, գիտական խոսք ասել Արցախյան պատերազմին Սյունիքի եւ սյունեցիների մասնակցության մասին: Առաջին անգամ խորությամբ եւ մանրակրկիտ կետադրույթով արխիվային նյութերը: Մեծ տեղ կհատկացվի մամուլին՝ եւ տվյալ ժամանակաշրջանի, եւ հաջորդած ժամանակաշրջանի: Պատշաճ ուշադրություն կդարձվի Արցախյան պատերազմի մասին եղած հուշագրություններին, գեղարվեստական, պատմական, փաստագրական գրքերին, գեղարվեստական ու վավերագրական ֆիլմերին:

Համարի նախապատրաստության նպատակով համագործակցության ենք հրավիրում ժամանակակիցներին, ազատամարտի մասնակիցներից յուրաքանչյուրին, այդ օրերի խաղաղ բնակիչներին (ասելիք ունեցող), քաղաքական գործիչներին, զորահրամանատարներին, զոհված ազատամարտիկների հարազատներին, զինվորականներին, համայնքային իշխանություններին, մարզի տարածքում տեղաբաշխված զորամիավորումներին, երկրագիտական թանգարաններին, հանրակրթական դպրոցներին, միջնակարգ մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատություններին, ոստիկանության տարածքային բաժիններին:

Մեզ համար շատ կարեւոր են յուրաքանչյուրի աջակցությունը, ամենավորը հուշն ու գրառումը, ամեն մի լուսանկար, ամեն մի տեսապատկեր: Ժամային առումով սահմանափակում չկա, խմբագրություն մեր կայացվող նյութերը կարող են լինել ակնարկների, հուշագրությունների, հարցազրույցների, ուսումնասիրությունների, հետազոտությունների, մեծագրությունների, գեղարվեստական խոսքի ցանկացած ժանրի տեսքով:

Համայնքային իշխանություններին, զինվորականներին, զոհված ազատամարտիկների կենսագրությունն ու լուսանկարը, ինչպես եւ բոլոր մասնակիցների ցուցակներն ըստ համայնքների:

Ինքնապաշտպանական ջոկատների, մյուս միավորումների հրամանատարներին: Էջ 2

Քաջարանցիները «Քրոնիմետր մայնինգի» հայտարարությունը համարում են սովորական ցինիզմ

ՃԱԿԱՏԱՍԱՐՑ ՍԱՐՏԱՆԱՅԻՆ ՔԱՋԱՐԱՆ ԳՅՈՒԿԻ ՀԱՍԱՐ

Սահմանային Քաջարան գյուղի համար ճակատամարտը նորանոր դրսևորումներ է ստանում: «Առավոտ» թերթի ղեկավարների 14-ի համարում տպագրվել էր «Քրոնիմետր մայնինգ»

ԲԸ-ի խոսքը Քաջարան գյուղի շուրջ ստեղծված կացության վերաբերյալ: Այդ հրապարակման բոլորոսահամ տեքստի վերջում ընկերությունն այսպիսի հայտարարություն է արել. ««Քրոնիմետր մայնինգ» ԲԸ-ն պաշտոնապես հայտարարում է, որ իր հայաստանյան դուստր ընկերության՝ «Ձանգեզուրի ՊՍԿ» ՓԲԸ-ի ղեկավարությունն

ընդունում է ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի 28-ի №627-Ն որոշման իրականացման արդյունքում ծագած խնդիրների, քննարկումների, առաջարկությունների եւ դիտողությունների վերաբերյալ քաղաքացիների դիմումները՝ այդ քաղաքացիների համար հնարավորինս շահաճարմանությունը՝ էջ 4

Խնդրահարույցը Նռնաձորի ճանապարհի կառուցումն է

ՃԱՆԱՊԱՐԿԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Տարեվերջյան այս օրերին «Մեղրու ճանապարհների շինարարության եւ շահագործման ձեռնարկություն» ԲԲ ընկերության (տնօրեն՝ Ազատ Գասպարյան) ճանապարհաշինարարներին կարելի է հանդիպել տարածաշրջանի տարբեր շինարարականներում:

«Երբ Ազատ Գասպարյանը Ազարակում է հայտնվում, ոնց որ իրադարձություն լինի», – ասում է քաղաքապետ Մխիթար Զաքարյանը: Ազարակի ներհամայնքային ճանապարհի նորոգումը ծրագրով նախատեսված էր երկու փուլով: Այժմ ընթացում է 2-րդ փուլի վերջնամասի նորոգումը, որը ներառում է ջրահեռացման վաքերի տեղադրումը, մայթերի կառուցումը, ինչի համար հատկացվել է 40 միլիոն դրամ:

Ընկերության տնօրեն Ա.Գասպարյանին հանդիպեցինք Արաքսի ափին: Մեղրի-Ծավ-Կապան

այլընտրանքային ճանապարհի 86-րդ կիլոմետրի հատվածում իրականացվում են մայր գետի ափապաշտպան կառույցների ամրացման աշխատանքներ: Գարնանային հեղեղումների ժամանակ այն հատվածը, որտեղ գետը ծունկ է տալիս, ենթարկվում է հեղեղումների, ինչը հետագայում սպառնում է անվտանգ երթևեկությանը: Ուստի խնդիր է դրված 400 գծամետր ափամերձ հատվածն ամրացնել: «Տեղ-տեղ գետի խորությունը հասնում է յոթ մետրի, ավտոկռուցվող ենք հսկա քարաքեկորներն իջեցնում գետը, որ ջրի հոսքը հեռացնենք ափից, բայց այս ամենից հետո հոսանքը գտնում է որեւէ թույլ տեղ եւ իր սեւ գործն անում», – բացատրում է տնօրենը: 90 միլիոն դրամ արժեքով այս ծրագրի պատվիրատուն ՀՀ գյուղնախարարությունն է:

Տարիներ ի վեր Մեղրի քաղաքում խնդրահարույց է եղել միջպետական մայրուղու վրա Մեծ ու Փոքր թաղերը միացնող կամրջի վերակառու-



Ազատ Գասպարյան, «Մեղրու ճանապարհների շինարարություն» եւ «Շահագործման ձեռնարկություն» ԲԲԸ տնօրեն

ցումը: Կամրջի երթևեկելի մասը նախատեսված է լայնացնել 3.5մ՝ այդպիսով այն կհասնի Շարունակությունը՝ էջ 3

Քաջարան քաղաքը կունենա նոր եւ հիմնանորոգված հիվանդանոց

ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ

Սյունիքի մարզի «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքը խորհրդային տարիներից մինչև հիմա չի նորոգվել: Այսօր այն գտնվում է անմխիթար վիճակում: Միեւնոյն ժամանակ՝ չկան համապատասխան բժշկական սարքավորումներ, խիստ զգացվում է նոր կադրերի պահանջ: Գուցե այս ծայրահեղ պայմաններն ու անհուսալիությունն են ստիպում բազում քաջարանցիների՝ բուժանք մեկնելու մայրաքաղաք: Շատերը դա բացատրում են՝ ասելով. «Առանց վարանելու ասում ենք՝ որ Քաջարանում այլևս հիվանդանոց չկա: Տեսնելով հիվանդանոցի շենքն ու անմխիթար պայմանները, մենք սկսում ենք չվստահել բժիշկներին, բուժքույրերին, ինչքան էլ որ կայացած լինեն նրանք իրենց գործում»: Ասել է թե՛ մարդիկ դրական տպավորություն են ստանում հենց շենքի, որը «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պարագայում հակառակ արդյունքն է տալիս:



Վարդան Ավագյան, «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրեն

թյան պատճառով: Այդ ամենին ակամա տես լինելուց հետո գրուցեցինք «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վարդան Ավագյանի հետ, որը չէր բաց թողնում հիվանդանոցի անմխիթար վիճակը, բայց վստահեցրեց, որ մոտ ապագայում մարզի լավագույն հիվանդանոցը Քաջարանի հիվանդանոցն է լինելու:

2011թ. մարտից սկսվել են Քաջարանի նոր բժշկական կենտրոնի վերակառուցման-նորոգման աշխատանքները: Նոր հիվանդանոցը կլինի նախկին ամբուլատորիայի տեղում, որը կառուցվել է անցած դարի 70-ականներին եւ երբեմն չի նորոգվել: Հիմնանորոգումից հետո ամբուլատորիան է հիվանդանոցը նույն տեղում են գործելու: Հինգամսավորումը կատարվում է ՁՊՄԿ-ի կողմից: Ըստ գլխավոր բժիշկ Վ.Ա.

վագյանի՝ հիվանդանոցում ամեն ինչ նոր է լինելու, հին հիվանդանոցից ոչինչ չեն տեղափոխելու: Կկանուցվի կաթսայատուն, որի շնորհիվ հիվանդանոցը ջեռուցվելու է: Նախատեսվում է աշխատանքներն ավարտել 2013 - ին:

Բոլոր քաջարանցիների համար էլ ուրախալի է ունենալ հիմնանորոգված հիվանդանոց, բայց նրանց հուզող առաջնային խնդիրը համապատասխան կադրեր ունենալն է նաև: Վարդան Ավագյանը քաջարանցիների այդ մտահոգության վերաբերյալ հետեւյալն ասաց. «Մեր առաջնային հարցը կադրերի խնդիրն է, ապա՝ սարքավորումների խնդիրը: Հավատացնում են, որ ապագայում բոլոր խնդիրներն էլ կլուծվեն»: Քաջարանում բժիշկների պակասը պայմանավորված է նաև նրանով, որ շատերը, մայրաքաղաքում ուսում ստանալուց հետո, այլևս մտադրություն չեն ունենում վերադառնալ հայրենի քաղաք, պատճառաբանելով, որ ապագա չեն տեսնում ծննդավայրում: Չնայած այս լուրջ խնդիրին Վ.Ավագյանը չի հուսահատվում եւ ասում է, որ նոր պայմանների դեպքում ամեն ինչ հակառակ է լինելու: Արդեն առաջընթաց է համարում, որ հիվանդանոցում իրականացվում են լաբորատորիայի վիրահատություններ՝ որակով մայրաքաղաքային հիվանդանոցներին գրեթե չզիջող: Հիվանդանոցում ունի լաբորատորիա, բայց խնդիր կա լաբորատորիա փակելու ծավալների եւ հնարավորությունների հարցում:

Վերջին տարիներին քաղաքում նաեւ ուրախալի փաստ է արձանագրվել՝ ծնելիությունը գերազանցում է մահացությանը: Կեսարյան վիրահատություն կատարելու համար մինչև վերջերս բազում խնդիրներ էին առաջանում, իսկ հիմա՝ գլխավոր բժիշկի վերապատրաստումից հետո, նաեւ այդ վիրահատությունն է իրականացվում: Հավելենք, որ ինչպես մյուս հիվանդանոցներում՝ Քաջարանի բժշկական կենտրոնում եւս «մաղարիչներ» են լինում, բայց գլխավոր բժիշկը հավաստիացնում է, որ դրա դեմ պայքար է մղվում, սակայն իսպառ վերացնել չի հաջողվում դեռեւս:

Քաջարանում տարածված են հատկապես սիրտ-անոթային ու սուր շնչառական ուղիների հիվանդությունները եւ շաքարային դիաբետը, որոնց, ըստ գլխավոր բժիշկի, տարածված են նաեւ ամբողջ հանրապետությունում: Ըստ տարիների Քաջարան քաղաքում մահացել է՝ 2008թ.՝ 69 , 2009թ.՝ 85 եւ 2010թ.՝ 61 հոգի, որն այդ փոքր քաղաքի համար, անընշտ, մտահոգող երեւույթ է:

ԶԱՐԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Գինեպար

ՄԱՐԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ



Նավասարդ է, նավասարդ, Իսկ մեր սրբում՝ հազար դարդ, Մրանում ենք անընդհար՝ Փողը քիչ է, հոգը՝ չար:

Մեկը չունի ձմռան փայր, Բայց արեւ է խոշոր պարբը, Ինչ է, թե՛ Նոր տարի է, Ուրախացել է անկապ:

Հագին զիզի-բիզի չոր, Ինքն իրենով՝ փառավոր, Կարծես ինքը չէր երեկ Անճարակին համազոր:

Կերավ, խնց ու պարեց, Մի քանի օր քեզ արեց, Գինին հասավ կարարին, Խոսքը դարձավ ճարարին:

Անգամ պարեց վեր-վերի, Հեղո մորակ քոչարի, Ենթան գոնեք ուրբերին Որ քիչ մնաց՝ չոչ անի...

2012 Վիշապի տարի

Ընդհանուր աստղագուշակ

Նոր՝ 2012 թվականը Վիշապի տարի է: Դժվար տարի է, սակայն կարելու է հաջողակ: Մարտի 1-ից հունիսի 1-ը հարապակի տարի է: Գնացեք համարձակորեն առաջ: Եթե ինչ-որ բան դրել էք մի կողմ, ապա հիմա ժամանակն է անելու: Վիշապի տարում պետք է իրականացնել բոլոր կարելու ծրագրերը: Դրսևորեք ինտրամուրթություն, պլանավորեք ձեր գործունեությունն ու ժամանակը:

Առնետ - Վիշապի տարին շատ հաջող է ձեզ համար: Տարին ձեզ համար կանցնի հանգիստ:

Ցուլ - Ցուլերը ստիպված կլինեն շատ աշխատել, ակտիվ շփվել եւ ցանալ ինքնադրսեւորվելու լավագույն ձևով: Անդադար աշխատանքի շնորհիվ ցուլերին կհաջողվի լրացուցիչ շահույթ ստանալ:


Վագր - Դժվար տարի է լինելու վագրի համար: Վագրերը ցանկություն կունենան ակտիվորեն դրսեւորել իրենց գործնական որակները:

Կապույտ - Կատվի ներքին խաղաղությունը եւ անհոգությունը կապահովեն հաջողություն ցանկացած նախաձեռնության:

Վիշապ - Լավագույն տարի, հաջողության տարի: 2012 թվականին խնդիրներ չեն ծագի, բոլորը բարեկամաբար կվերաբերվեն ձեզ:

Օձ - Միշտ պահեք օձի ավելորդ անհանգստությունը, նրա իմաստությունը: Տարին շրջադարձային կլինի բոլոր ոլորտներում:

Ձի - Վիշապի տարին ձեզ մեծ հաջողություն կբերի: Երջանիկ օրերը շատ



կլինեն: **Այծ** - Տարին կլինի հետաքրքիր, վերջապես կիրագործվեն ձեր վաղեմի գաղափարներն ու ծրագրերը: **Կապիկ** - Տարին բարեկամատ է անձնական կյանքում փոփոխությունների համար: Ուրախացեք եւ երջանկացեք, գործերը լավ կընթանան: **Աքլոր** - Ամեն ինչ կարծես թե նորմալ է: Այս տարի դուք կկարողանաք նոր օգտակար կապեր, անհրաժեշտ ծանոթություններ հաստատել գործընկերների հետ: **Հուն** - Տարին այնքան էլ հարթ չի ընթանա, սակայն ձեր ցանքերի արդյունքները կգերազանցեն ձեր ամենահամարձակ սպասումները: **Վարազ** - Հավասարակշռված վարքը հաջողության գրավականը կլինի Վիշապի տարում:

Ամանորի սեղանի ձեւավորումը

Վիշապն իր տուրքերը ամենակեր է: Այս կենդանին սիրում է ուտել այն ամենը, ինչ շարժվում եւ շնչում է: Բայց, օրինակ, եթե կերակուրը կորցնում է իր արտաթելի տեսքն ու թարմությունը, դա գայրացնում է վիշապին: Ուստի ուշադրություն դարձրեք, որ 2012թ. տոնական սեղանը զարդարեն միայն թարմ կերակրատեսակները:

Եթե հետեւեք արեւելյան խոհանոցի կանոններին եւ ուտեստները պատրաստեք հյուրերի ներկայությամբ, ապա կլինեք ավելի յուրօրինակ ու չկրկնվող:

Տոնական սեղանը պետք է զարդարեն

1. Դրձիկով պատրաստված առն-

վագն մեկ տեսակի ուտեստ:

2. Չկնեղեն 2012թ. ընդունելի է արագ եփվող ցանկացած տեսակի ձկնեղեն: Վիշապն այդ առումով պահանջկոտ ու քմահաճ չէ:

3. Մրգամանների մեջ գեղեցիկ ձեւավորված առատ մրգեր:

4. Տարատեսակ աղցաններ: Քանի որ վիշապը երբեք չի հրաժարվել համեղ կերակուր ուտելուց, ուստի հատկապես տոնական օրերին կարելի է մոռանալ բոլոր տեսակի դիետաների մասին: Տոնական սեղանը ձեւավորելիս՝ օգտագործեք տարատեսակ համեմունքներ, ընտրեք չիլի պղպեղ, մեխակ, դարչին, մշկընկույզ: Նշված համեմունքներով կարելի է համեմել բոլոր տեսակի տոնական կերակուրները: Պատրաստեք սիրով, եղեք անկրկնելի՝ հատկապես տոնական օրերին:

Ի՞նչ հագուստ ընտրել Ամանորը դիմավորելու համար

Տարվա խորհուրդը՝ սեւ Վիշապի տարին, արդեն ձեզ հուշում է, որ գույնի առումով ամեն ինչ պարզ է: Համոզված եղեք՝ սեւ գույնի փայլվումը զգեստը դուր կգա Վիշապին: Երկրորդ տեղում է ոսկեգույն

երանգով ընտրված հագուստը: Իսկ, ահա, երրորդ տեղում կարմիր կրակի գույնն է, որը դիմակահանդեսներ սիրող կենդանուն անտարբեր չի թողնի ձեր հանդեպ: Աստղաբանները նաեւ պնդում են, որ Վիշապի գույներից կարելի է համարել նաեւ կանաչը, քանի որ Հինաստանում վիշապը ներկայացվում է կարմիր-կանաչ կենդանու կերպարով: Եվ վերջում, գույների շքերթը կարելի է ավարտել ջրի երանգներով, քանի որ ի վերջո վիշապը նաեւ ջրային կենդանի է:

Հագուստի համար կտոր ընտրելիս կան գզետ գնելիս ուշադրություն դարձրեք, որպեսզի այն լինի շիֆոնից կամ մետաքսից՝ ձեզ ավելի եթերային, թեթեւ ու տոնական դարձնելու համար: Տարին դիմավորելու համար նույնպես կարող եք ընտրել կաշու կտորից հագուստներ, հատկապես՝ վագրի:

Ներկայացրեք՝ ԶԱՐԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



ՊԱՇՏՆԱԿԱՆ ՀԱՂՈՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Դիմո գոլդ մայնինգ քամփին» ՓԲԸ-ն հայտարարում է իր աշխատակիցների աշխատավարձերի կառուցվածքի փոփոխության մասին:

2012թ. հունվարի 1-ից սկսած «Դիմո գոլդ մայնինգ քամփին» ՓԲԸ-ն գործածելու է հայկական եւ միջազգային շուկաների ուսումնասիրության արդյունքում ձեւավորված աշխատավարձերի նոր կառուցվածք: Աշխատավարձերի բարձրացումն ուժի մեջ կմտնի նշված ամսաթվից եւ կվճարվի 2012թ. առաջին իսկ աշխատավարձով:

Ընկերությունը նաեւ ուրախ է հայտարարել, որ մինչեւ Ամանորի արձակուրդներն աշխատակիցներից յուրաքանչյուրին կվճարվի Ամանորի պարգևավճար 55.000 դրամի չափով: Ներկայիս աշխատակիցներից յուրաքանչյուրը պարգևավճարի տեսքով ստանալու է եւս մեկ ամսվա աշխատավարձ՝ որպես ս.թ. հուլիսի 1-ից աշխատավարձերի բարձրացմանը համարժեք վճարում: Ներկայիս բոլոր աշխատակիցները՝ անկախ աշխատատեղից, կստանան եւս մեկ ամսվա աշխատավարձ՝ ի նշան «Դիմո գոլդ մայնինգ քամփին» ՓԲԸ-ի՝ ընտանեկան արժեքների հանդեպ ունեցած հավատարմության:

Ընկերությունը շնորհավորում է իր աշխատակիցներին եւ նրանց ընտանիքներին՝ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ՝ մաղթելով նրանց ամենայն բարիք:

Ընկերության տնօրինություն

